ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ԵՎ ՄՈՏԱԼՈՒՏ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

ԽՈՋԱԲԵԿՅԱՆ Վ. Ե.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Տասնամյակներ առաջ ժողովրդագրական գործընթացների, բնակչության տարաբնակեցման և քաղաքակենտրոնացման ուսումնասիրությունների շրջանակը բավական լայն էր: Լայնորեն օգտագործվում էին սոցիոլոգիական հետազոտությունների (ընտրանքային և զանգվածային հարցաթերթիկային հարցումներ) նյութերը: Հատուկ ուշադրություն էր նվիրվում ընտանիքի, ժողովրդագրական գործընթացների և դրանց փոփոխությունների պատճառների բացահայտման տարաբնույթ խնդիրների լուծմանը:

Ժողովրդագրության զարգացման օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների և բնակչության աճի գործոնների դերի բացահայտման ու գնահատման հիման վրա ժամանակին կանխատեսվել է Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը՝ երկարատև հեռանկարի տարբեր փուլերի համար: Դրանք մասնավորապես ընդգրկում են 1966-1985 թթ., 1970-2000 թթ. և 1979-2016 թթ. ժամանակահատվածները: Բայց վերջին տարիներին տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով այդ կանխատեսումները, մանավանդ 1990-ի կեսերից սկսած, կիրառելի չեն: Ըստ այդ կանխատեսումների, հանրապետության բնակչությունը 2000 թ. կազմելու էր մոտ 4 մլն մարդ: Սակայն անկախության տարիներին բնակչությունը նվազեց, քանի որ արտագաղթը կրեց համընդհանուր բնույթ:

Ընդհանուր առմամբ, բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորվում են բուն ժողովրդագրական գործընթացների՝ պատմականորեն հանդես եկող ու տվյալ պահին ինքնուրույն գործող երևույթների և հասարակության սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցության ներքո: Յուրաքանչյուր տվյալ պահին ծննդի, մահվան, ընտանիքի մեծության ու գաղթի ընթացքի վրա մեծապես ազդում է բնակչության տարիքային կազմը, որը գոյանում է պատմական զարգացման ընթացքում հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին և տեղաշարժերին համընթաց, ինչպես նաև արտակարգ երևույթների (պատերազմ, բնական աղետներ, տարափոխիկ հիվանդություններ և այլն) հետևանքով: Այդ բոլորը պայմանավորում են նրա ընդհանուր թվակազմում բնակչության տարիքային կազմը՝ երեխաների, երիտասարդության և ծերերի տեսակարար կշիռների փոխհարաբերությունները: Եթե հասարակությունը բնութագրվում է երիտասարդ բնակչությամբ, մնացած այլ հավասար պայմաններում առկա են բարձր ծնունդը և ցածր մահացությունը: Մի երևույթ, որը Հայաստանում տեղ է գտել մինչև 1980-ականի վերջերը: Սակայն 1992 թ. առ այսօր ծննդաբերությունը նվազում է, և այդ միտումը կշարունակվի:

Երկրում ծնվածների և մահացածների մասին մանրամասն և ամբողջական պատկերացում է տալիս թիվ 1 աղյուսակը:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության բնակչության բնական աճի ցուցանիշները 1985-2002թթ.[1] (հաշվարկը կատարվել է բնակչության 1000 շնչի հաշվով)։

	Թվականները						
	1985	1990	1993	1995	1998	2000	2002
Բնական աճը	18,2	16,3	8,4	6,4	4,3	2,7	2,1
այդ թվում՝							
քաղաքային բնակավայրերում	16,5	14,4	6,6	4,9	3,6	2,2	2,0
գյուղական բնակավայրերում	21,8	30,6	12,3	9,6	5,6	3,6	2,3
Ծնունդը	24,1	22,5	15,8	13,0	10,4	9,0	10,1
այդ թվում՝							
քաղաքային բնակավայրերում	21,8	20,4	13,9	11,5	9,7	8,4	10,1
գյուղական բնակավայրերում	28,8	27,3	19,8	16,2	11,8	12,2	10,0
Մահը	5,9	6,2	7,4	6,6	6,1	6,3	8,0
այդ թվում՝							
քաղաքային բնակավայրերում	5,3	6,0	7,3	6,6	6,1	6,2	8,1
գյուղական բնակավայրերում	7,0	6,7	7,5	6,6	6,1	6,6	7,7

Հայաստանի Հանրապետության բնակչության ծննդաբերության ընդհանուր գործակիցների ձևավորման վրա առավել ազդում են տարիքային կազմի, քաղաքակենտրոնացման մակարդակի և բնակչության շարժի ասպարեզներում տեղի ունեցող փոփոխությունները: Ժողովրդագրական զարգացման ցուցանիշները խտացված արտահայտվում են ծննդաբերության գործակիցների մեջ, որոնք բնակչության սեռատարիքային կազմի հետ մեկտեղ անմիջականորեն

[1] Աղյուսակը կազմվել է հետևյալ ժողովածուների տվյալների հիման վրա՝ *Демографический ежегодник 1991, Е., 1992, с. 62*; Հայաստանը թվերում՝ 1990 թվականին, Ե., 1991, էջ 22, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994 թթ., Ե., 1995, էջ 15, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ., Ե., 2000, էջ 121, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ., Ե., 2001, էջ 133, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2002 թվականի հունվար-դեկտեմբերին, Ե., 2003, էջ 150:

արտահայտում են ժողովրդագրական զարգացման մակարդակը:1993-2002 թթ. ևս Հայաստանում ծննդի մակարդակի վրա մեծ հետք են թողել բնակչության տարիքային կազմում տեղի ունեցող տեղաշարժերը: Դա ոչ միայն բնակչության «ծերության» հանգեցնող և սոցիալ-տնտեսական նոր պայմանների, այլև նաև Հայրենական մեծ պատերազմի հետևանքն է: Բնակչության վերարտադրության վրա վերջինս բացասաբար ազդեց ոչ միայն պատերազմի տարիներին, այլև 1960-ական թվականների կեսերից մինչև 1970-ականի կեսերը և 1980-ականի վերջերից մինչև 1990-ականի կեսերը, երբ մի դեպքում ամուսնության տարիք թևակոխեցին պատերազմի տարիներին ծնվածները, իսկ մյուս դեպքում՝ նրանց երեխաները և թոռները: Որպես այդ պատերազմի հետևանք՝ 1986 թ. համեմատությամբ (1986 թ. ՀՀ-ում նկատվել է ամենաբարձր ծնունդը՝ 81,2 հազ. երեխա, մի բան, որը մինչ այդ չի նկատվել և կմնա անգերազանցելի ապագա ողջ ընթացքի համար) 1991-1998 թթ. զգալիորեն նվազեց 21-24 և ապա 25-29 տարեկան կանանց բացարձակ թիվը: Գործընթացը պետք է շարունակվեր մինչև 1990-ականի վերջերը, այսինքն՝ պտղաբերության տարիքի կանանց թվակազմի փոփոխությունների հաշվին ծնվող երեխաների բացարձակ թիվը պետք է շարունակեր նվազել, որից հետո պտղաբերության տարիք մուտք գործող կանանց թիվն ավելանալու հաշվին ծնունդը բարձրանալու էր: Բնակչության վերարտադրության վրա Հայրենական մեծ պատերազմի ազդեցությունն ալիքաձև կարտահայտվեր նաև XXI դ. առաջին տասնամյակում, ապա՝ կմարեր: Բայց 1990-ական թվականների կեսերից կյանք մտած մի շարք այլ երևույթներ բնակչության ծննդաբերության վրա ունեցած բացասական հետևանքներով զգալիորեն չեզոքացրին հիշատակվող գործոնի դերը, որի հետևանքով նվազեց ծնվող երեխաների սպասվելիք ընդհանուր թիվը:Ներկա պայմաններում Հայաստանում բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորող գործոնների դերի, դրանց բնույթի փոփոխության և մի շարք նոր գործոնների ձևավորման ընթացքի վրա մեծ են հանրապետությունում ստեղծված իրավիճակի դերը, մասնավորապես հարևան հանրապետության կողմից չհայտարարված պատերազմը, շրջափակումները, Սպիտակի երկրաշարժը, անժամանակ մասնավորեցումները, հապշտապ սեփականաշնորհումները, տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը և սոցիալ-տնտեսական այլ գործոններ: Ինչպես նկատեցինք, պատերազմները և ճգնաժամերը գենոֆոնդի վրա ազդում են ոչ միայն տվյալ պահին, երբ հայրենի հողի համար իրենց կյանքը նվիրաբերում են հազարավոր մարտիկներ, այլև ապագայի առումով, երբ կյանքի թելը չկտրվելու պայմաններում նրանք պիտի նոր սերունդներ արարեին ու ապահովեին սերնդափոխության անվերջանալի շղթայի բնականոն ընթացքը: Դրան 1991-1992 թթ. գումարվում էր սահմանամերձ գոտիների խաղաղ ու անզեն բնակչության փախստական դառնալը, երբ շատերը թողնում էին հայրենի օջախը և բնակվում քաղաքներում, հարթավայրային շրջաններում ու օտար ափերում: Արտագաղթում էին ժողովրդական տնտեսության անկման, աշխատուժի բարձր առաջարկի և ցածր պահանջարկի, գործազրկության, աղքատության, օրավուր ցածրացող ու չնչին աշխատավարձի և այլ պատճառներով: Արտագաղթի հետևանքով փոխվեցին բնակչության

սեռատարիքային կազմը, երիտասարդության, մտավոր ներուժի և կապիտալի արտահոսքի իրավիճակը:

Ձևավորվեցին բնակչության աճի և տեղաշարժերի, էթնոժողովրդագրական գործընթացների առանձնահատկությունների նոր օրինաչափություններ, արտագաղթի դրական և բացասական միտումներ: Քննվող երևույթն ավելի լավ պատկերացնելու համար կարելի է հետևել մշտական բնակչության տարբեր տարիքային խմբերի տեսակակարար կշիռների փոփոխության ընթացքին, ինչի մասին պատկերացում է տալիս թիվ 2 աղյուսակը:

Աղյուսակ 2

ՀՀ մշտական բնակչության թիվը՝ ըստ տարիքային խմբերի[2]
(մարդահամարների տվյալներով)

	հազար մարդ			բնակչության ամբողջ թվի մեջ (տոկոսներով)		
	1979	1989	2001	1979	1989	2001
Ամբողջ բնակչությունը	3037,03	3304,8	3213	100	100	100
այդ թվում՝ ըստ տարիքի (տարեկան)						
0-4	322,1	375,5	196,1	10,6	11,4	6,1
5-9	296,8	335,6	258,5	9,8	10,2	8,0
10-14	320,2	291,8	325,4	10,5	8,8	10,1
15-19	383,1	278,1	313,62	12,6	8,4	9,8
20-24	332,0	280,6	67,5	10,9	8,5	8,3
25-29	239,4	329,6	222,6	7,9	10,0	6,9
30-34	149,3	292,2	204,62	4,9	8,8	6,4
35-39	152,4	216,1	44,3	5,0	6,5	7,6
40-44	198,1	131,5	276,1	6,5	4,0	8,6
45-49	171,1	136,5	211,5	5,6	4,1	6,6
50-54	159,0	174,8	153,8	5,2	5,3	4,8
55-59	71,7	154,3	80,1	2,4	4,7	2,5
60-64	58,1	136,3	147,3	1,9	4,1	4,6
65-69	65,3	55,7	118,7	2,2	1,7	3,7
70-79	86,7	78,3	162,2	2,9	2,4	5,0

[2] Հայաստանը թվերում՝ 1990 թվականին, էջ 20, Հայաստանի Հանրապետության մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), Ե., 2003, էջ 226-228: Բայց վերջինս ճիշտ չի արտահայտում իրականությունը, քանի որ մարդահամարում հաշվի են առնվել Հայաստանից տարիներով բացակայող, բայց գրանցման մեջ գտնվող հարյուր-հազարավոր մարդիկ (միգրանտներ):

80 տարեկան և ավելի	29,2	36,5	30,6	1,0	1,1	0,9

Արդեն տեսանք, որ ամենաբարձր պտղաբերության տարիքն ընդգրկող բնակչությունը (20-29 տարեկաններ) սկսել է նվազել 1987թ.: Դրա պատճառների թվում առաջին հերթին պետք է մատնանշել ժողովրդագրության բնագավառում տեղի ունեցող ոչ ցանկալի դրսևորումները՝ բնակչության թվաքանակի նվազում, ծերացում, անկառավարելի արտագաղթ և այլն: Վերջին 15 տարիներին բնակչության արտագաղթի հետևանքով նվազեց ոչ միայն ընդհանուր բնակչությունը, այլև փոխվեցին նրա սեռատարիքային կազմը, ծննդի ու մահվան ընդհանուր չափերը, բնակչությունը ծերացավ: Մեր հաշվարկներով 1991 թ. մինչև օրս գաղթող բնակչության բացասական մնացորդը կազմել է շուրջ 1,4 մլն մարդ: 2001 թ. մարդահամարը չտվեց մշտական բնակչության իրական պատկերը, քանզի հանրապետությունից արտագաղթած բնակչության մի մասը, որը գրանցված էր հայրենիքում, սակայն վաղուց կտրված էր հայրենիքից, համարվեց մշտական բնակիչ: Այդ բացը լրացնելու համար պետք է ունենալ մշտական և գաղթած բնակչության ճշգրիտ թիվը: Բնակչության ընդհանուր թվաքանակի հետ միասին պետք է ճշգրտել նրա սեռատարիքային կազմը և ծերացած բնակչության ընդհանուր թիվը՝ բնակչության տարիքային բուրգը ստանալու համար: Դեռևս 1960-ականների կեսերից մինչև 1970-ականների կեսերի ցածր ծնունդը, ապա 1980-ականների կեսերից մինչև 1990-ական թվականների սկզբների բարձր ծնունդն աստիճանաբար տեղի տվեցին ծննդի նվազեցմանը: Դա պայմանավորված էր նաև սոցիալ-տնտեսական գործոններով, որոնք հանգեցրել են Հայաստանում ընտանիքի միջին մեծության նոր չափանիշների երևան գալուն: Հանրապետությունում մինչև 1990 թ. բնակչության տարիքային կազմի երիտասարդացման հետ գիտելիքների նկատմամբ ներկայացվող պահանջմունքների աճը, քաղաքակենտրոնացման աստիճանը, քաղաքային բնակչության բարձր տեսակարար կշիռը, երեխաների դաստիարակության, խնամքի, ուսուցման նկատմամբ պահանջների աճը և վերը [3]թվարկված մյուս գործոններն ի հայտ բերեցին ընտանիքի մեծությունը պայմանավորող նոր չափանիշներ: Բարձր ծնունդն աստիճանաբար տեղի տվեց, և 1987 թ. տվյալներով ընտանիքում երրորդ և հաջորդ երեխաները կազմում էին բոլոր ծնվածների 25,3%-ը (չորս և ավելի երեխաներ ունեցող ընտանիքները կազմում էին 6,6%): Ծնող մայրերի ընդհանուր թվում 1989-1990 թթ. երեք և ավելի երեխաներ ծնածները բավականին մեծ թիվ էին կազմում, որը բացատրվում էր երկրաշարժի կորուստները փոխհատուցելու ձգտումով: Ներկայումս այդ մայրերի թիվը խիստ նվազում է: Այն 1995-1996 թթ. կազմել է 48547, որից երեք և ավելի երեխաներ ծնած մայրերը՝ 16612, ծնողների ընդհանուր թվում կազմում են 24,4%. 2000-2003 թթ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 32853, 6262 և 20,7%:Այսպիսով, 1990-ականների սկզբներից բարձր ծնունդն աստիճանաբար տեղի տվեց, և վարձու աշխատանքներում ընդգրկված կամ չընդգրկված երիտասարդության ընտանիքները փոքրացան, ավելացան չամուսնացողները:

[3] *Население СССР. Статистический сборник, М., 1987, с. 296.*

Ընտանիքների փոքրացման հիմնական պատճառը մեկ կնոջ հաշվով ծնվող երեխաների թվի նվազումն էր: Այդ է վկայում թիվ 3 աղյուսակը:

Աղյուսակ 3

Պտղաբերության գործակիցը 1958-2002 թթ[4]

Տարեթվեր	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
1958-1959	3,6	6,0	4,7
1965-1966	3,0	5,2	3,9
1969-1970	2,7	4,4	3,2
1975-1976	2,5	3,7	2,8
1980-1981	2,1	3,0	2,3
1985-1986	2,3	3,2	2,6
1990-1991	2,3	3,15	2,6
1995-1996	1,4	2,05	1,6
2000-2001	0,97	1,05	1,03
2002	1,0	1,0	1,0

Ծնելիության մակարդակի նվազման պայմաններում կանանց[*]:

[4] Աղյուսակը կազմվել է հետևյալ ժողովածուների հիման վրա՝ Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական ժողովածու, Ե., 1999, էջ 12: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, Երևան, 2004, էջ 35: Պտղաբերության գործակիցները ճշգրտելու նպատակով Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) գյուղական և քաղաքային կանանց մեջ 1997 թ. նոյեմբեր - 2000 թ. նոյեմբեր ընկած ժամանակահատվածի համար անցկացրել է ընտրովի հարցումներ:

[*] Զանգվածային գաղթին նախորդող տարիներին ԱՎԾ-ի և հարցման ցուցանիշները գրեթե համընկնում են: Վիճակագրական ընթացիկ հաշվարկներից պտղաբերության ցուցանիշը խիստ պակաս է, քանի որ ընդունվել է ծնվածների թվի և 15-49 տարեկանների հարաբերակցությունը: Բայց եթե ծնվածների բացարձակ թիվը ռեալ է, ապա կանանց մի զգալի մասը միգրացիայի մեջ է գտնվում: Հետագայում կնկատենք, որ պակաս են ստացվում նաև 1000 ծնվածի հաշվով ծննդի և մահացության գործակիցները: Ըստ այդ հարցումների, պտղաբերության գործակիցը ստացվել է ավելի բարձր: Պտղաբերության ամբողջական գործակիցը հարցմանը նախորդող վերջին երեք տարիների համար մեկ կնոջ հաշվով կազմում է 1,7 երեխա: Այս գործակիցը ցածր է բնակչության վերարտադրությունն ապահովող պտղաբերության մակարդակից (որը 2,0-ից փոքր-ինչ բարձր է): Քանի որ գյուղաբնակ կանանց պտղաբերության մակարդակները նրանց վերարտադրողական կյանքի ընթացքում ավելի բարձր են քաղաքաբնակների նկատմամբ, ապա նրանց պտղաբերության ամբողջական գործակիցն ավելի բարձր մակարդակի է հասնում քաղաքաբնակ կանանց համեմատ (2,1՝ 1,5-ի դիմաց): (Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի

1980-ական թվականներից սկսած՝ Հայաստանում ծնունդն առավելապես «կուտակվում էր» առաջին և երկրորդ երեխաներ ծննդաբերած մայրերի խմբերում, որը մեր օրերում ավելի արտահայտիչ դարձավ: Կան և այլ հանգամանքներ: Բազմանդամ ընտանիքներում, օրինակ, մայրը երեխաների նկատմամբ ցուցաբերած խնամքի և հոգատարության հետ մեկտեղ իր հանրօգուտ աշխատանքի դիմաց ստացած միջոցները բաժանում է ընտանիքի ավելի շատ անդամների միջև: Այդուհանդերձ, հատկապես 1991 թ. սկսած, ծննդաբերության պատկերը հանրապետությունում խստորեն փոխվեց: Այդ գործոնների ազդեցության տակ Հայաստանում գրեթե բոլոր տարիքային խմբերում իջել են կանանց ծննդաբերության հատուկ գործակիցները: Եթե տասնամյակներ առաջ, ինչպես նկատեցինք, պտղաբերության ակտիվ տարիքն ընդգրկում էր 20-39 տարեկան կանանց, ապա այդ ակտիվ տարիքի սահմանները, աստիճանաբար նեղանալով, այժմ հիմնականում ընդգրկում են 20-24 տարեկաններին:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ բավական երկարատև ժամանակահատվածում՝ 1958-1992 թթ., ծնունդը փոքր ելևէջներով ավելացել է միայն 20-24 տարիքային խմբերում ընդգրկվող կանանց շրջանում: 1993 թ. սկսած՝ այդ գործակիցները խստորեն նվազել են բոլոր տարիքային խմբերում: Այդ են վկայում թիվ 4 աղյուսակի տվյալները:

Գիտական մեծ հետաքրքրություն ունի 1990-ական թվականների սկզբներից հանրապետությունում քաղաքական և սոցիալ-տնտեսական ասպարեզում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով բնակչության վերարտադրության օրինաչափությունների ձևավորման ընթացքի ուսումնասիրությունը և դրանց վրա ներազդող գործոնների դերի բացահայտումն ու գնահատումը:

Աղյուսակ 4

Հայաստանում 1000 կնոջ հաշվով ծնված երեխաների միջին տարեկան թվաքանակն ըստ կանանց տարիքային խմբերի[5]

հետազոտություն, 2000, Ե., 2001, էջ 83): Կարևոր նշանակություն ունի ծնելիության բրուտտո և նետտո գործակիցների հաշվարկը: Բրուտտո գործակիցը միջին հաշվով արտացոլում է, թե քանի աղջիկ երեխա է ծնել մեկ կինը: Նետտո գործակիցը որոշում է, թե միջին հաշվով քանի աղջիկ երեխա է ծնել մեկ կինը, որոնք հասել են մոր տարիքին: Դրանք բնակչության վերարտադրությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներն են: Այդ գործակիցները Հայաստանում 1980 թ. համապատասխանաբար կազմել են 1.130 և 1.077, 1985 թ.՝ 1.238 և 1.186, 1990 թ.՝ 1.277 և 1.237, 1995թ.՝ 0.798 և 0.780. 1999թ.՝ 0.585 և 0.573, 2001թ.՝ 0.498 և 0.481: Ընդհանուր առմամբ, մոտենում է լավագույն ցուցանիշի, երբ նետտո և բրուտտո գործակիցների հարաբերությունները մոտենում են մեկի: Դա նշանակում է, որ մահացությունը համապատասխանաբար ցածր է: Օրինակ՝ 1980 թ. նետտո և բրուտտո գործակիցների հարաբերությունը կազմում է 0.95, 1990թ.՝ 0.96, 1999թ.՝ 0.98, 2001 թ.՝ 0.985 (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ., էջ 134):

[5] Աղյուսակը կազմվել է հետևյալ ժողովածուների հիման վրա՝ Ընտանիքը և երեխաները Հայաստանում, վիճ.ժողովածու, Ե., 2000, էջ 16: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, ՀՀ ԱՎԾ, Ե., 2003, էջ 34:

Տարեթվեր	Տարիքային խմբեր							
	15-19	20-24	25-29	30-34	35-39	40-44	45-49	15-49
1958-1959	37,6	200,6	264,1	204,4	154,9	68,0	16,4	159,2
1965-1966	47,3	226,2	225,5	149,1	87,8	35,4	10,2	122,4
1969-1970	41,2	213,3	164,2	123,8	67,6	23,8	5,1	92,9
1975-1976	38,7	208,7	160,4	81,4	43,2	15,1	2,1	83,8
1980-1981	45,0	204,3	132,4	56,3	21,4	6,9	1,4	85,2
1985-1986	57,0	236,5	132,3	60,3	19,5	4,4	0,6	91,3
1987	56,0	240,7	131,3	55,5	19,3	5,4	0,5	88,5
1988	61,5	234,4	126,7	52,3	18,7	4,4	0,3	84,7
1989	66,2	226,6	134,5	65,5	23,0	4,7	0,3	89,7
1990	69,1	223,9	131,3	68,8	24,9	5,5	0,4	88,0
1991	75,5	222,4	124,9	62,9	23,8	5,2	0,3	84,3
1992	82,5	207,5	104,1	50,8	20,1	4,3	0,4	74,4
1993	77,0	176,9	80,5	38,8	15,7	3,7	0,4	60,8
1994	68,0	149,5	70,0	34,5	14,5	3,6	0,2	51,6
1995	56,2	141,7	73,6	35,2	15,4	3,3	0,3	48,5
1996	53,3	137,8	76,6	34,0	14,3	3,5	0,2	47,0
1997	43,3	129,3	69,6	31,7	13,3	3,3	0,2	36,9
1998	34,6	117,9	63,2	28,0	12,4	3,1	0,2	37,4
1999	29,8	112,1	58,5	24,6	10,8	2,8	0,2	34,2
2000	27,3	103,1	53,7	23,5	10,6	3,0	0,2	31,7
2002	27,6	113,0	61,4	26,7	10,1	2,5	02	35,3

Նոր պայմաններում փոխվել են բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորող գործոնների դերն ու բնույթը, հանդես են եկել մի շարք նոր երևույթներ: 1991-2002 թթ. բնակչության զարգացման օրինաչափությունների ձևավորման վրա մեծ հետք թողեցին նոր սոցիալ-տնտեսական պայմանները, հատկապես անցումը սեփականության նոր ձևերին, տնտեսավարման նոր մեթոդներին և, ընդհանրապես, «շուկայական թերապիային»: Այդ ընթացքում թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչության բնական աճի վրա ներազդել են իրար միահյուսված բազմաբնույթ երևույթներ, որոնք հաճախ, համանման ազդեցություն ունենալով հանդերձ, տարբերվել են ներգործության աստիճանով, արտահայտվել դրանցից ամեն մեկին բնորոշ առանձնահատկություններով: Սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները կապված են բազմասեփականության, տնտեսության վերարտադրողական կառուցվածքի ձևախեղումների, տնտեսական նոր մեթոդների արմատավորման և, ընդհանրապես, շուկայական հարաբերությունների ներկա ընթացքի հետ, որոնք իրենց հակասական ազդեցությունն են դրոշմել Հայաստանի բնակչության վերարտադրության ողջ ընթացքի և օրինաչափությունների ձևավորման վրա:

Ընդհանրապես փոքրացել են ընտանիքները: Բնակչության մեծ մասի նյութական և սոցիալական անապահովվածությունը, նրա խիստ բևեռացումը, գործազրկությունը, ցածր վաստակը, թանկությունը, սոցիալապես անպաշտպան խավի մեծ մասշտաբներն ու այլ երևույթներ 1993-2002 թթ. ծննդի նվազումն ավելի ակնառու

են դարձրել: Այդ են վկայում ինչպես վերը բերված թիվ 4, այնպես էլ ներքոհիշյալ թիվ 5 աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 5

ՀՀ-ում ծնվածների և մահացածների բացարձակ թիվը (հազ. Մարդ)[6]

Տարեթվեր	Ծնվածների բացարձակ թիվը			Մահացածները
	Ընդամենը	այդ թվում		
		քաղաք	գյուղ	
1970	55,7	31,7	24,0	12,3
1975	62,9	39,4	23,5	15,5
1980	70,3	44,0	26,3	17,1
1985	80,3	49,3	31,0	19,6
1986	81,2	50,1	31,1	19,4
1987	78,5	47,7	30,8	19,7
1988	74,7	47,6	27,1	35,6
1989	75,3	47,9	27,4	20,8
1990	79,9	50,2	29,7	22,0
1991	77,8	48,4	29,4	23,4
1992	70,6	44,0	26,6	25,8
1993	59,0	35,3	23,7	27,5
1994	51,2	30,0	21,2	24,6
1995	48,9	29,1	19,8	24,8
1996	48,1	29,4	18,7	24,9
1997	43,9	26,9	17,0	23,9
1998	39,4	23,8	15,6	23,2
1999	36,5	22,5	14,0	24,1
2000	34,4	21,4	12,3	23,8
2001	32,1	20,3	11,7	24,0
2002	32,2	20,8	11,4	25,5

Պաշտոնական տվյալներով ծննդաբերության ընդհանուր գործակիցը 1990 թ. 22,5 մարդուց իջավ և 2002 թ. կազմեց 10,1, մահացությունը՝ 8,0, բնական աճը՝ 2,1 մարդ:

Բանն այն է, որ 1993-2002 թթ. ծնվածների բացարձակ տվյալներն իրական պատկերը ճիշտ են արտահայտում: Ինչ վերաբերում է բնակչության 1000 շնչի հաշվով ծննդաբերության և մահացության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալներին, ապա դրանք հիմնված են սխալ ելակետային սկզբունքների վրա, քանի որ, ինչպես նկատեցինք, արտագաղթած, բայց Հայաստանում գրանցված մարդիկ համարվեցին մշտական բնակիչներ: Հետևաբար, ծնվածների և մահացածների բացարձակ թիվը 1000 շնչի հաշվով իրականում բաժանվում է

[6] Աղյուսակը կազմվել է հետևյալ ժողովածուների հիման վրա՝ *Население СССР 1987, М., 1988, с. 124; Демографический ежегодник 1991, с. 224,* Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1993-1994թթ., էջ 15, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ., էջ 121, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, էջ 31:

բնակչության ավելի մեծ թվի վրա: Դրա հետևանքով ծննդաբերության և մահացության ցուցանիշները մեխանիկորեն նվազում են: Իրականում այդ գործակիցները պետք է հաշվարկել Հայաստանում մշտական գրանցում ունեցող բնակչությունից գաղթածներին բացառելու միջոցով, քանի որ նրանց ծնունդն ու մահը երկրի վիճակագրական տվյալներում չեն արտահայտվում: Տվյալ դեպքում բնակչության 1000 շնչի հաշվով ծնվողների և մահացողների թիվն ավելի բարձր կլինի: Այսպիսով, այն, ինչ ցույց է տրված ԱՎԾ–ի 1993-2002 թթ. ժողովածուներում, ներկայացվում են բավական ցածր թվերով, որոնք սխալ են:

Ելնելով ժողովրդագրական ասպարեզում առկա լարվածությունից՝ նպատակահարմար է առաջիկա 5-10 տարիների ընթացքում կատարելագործել ժողովրդագրական կիրառվող քաղաքականությունը և իրագործել օրենսդրական հիմունքներով, կենտրոնացված միջոցների և նպատակային հիմնադրամի հաշվին հետևյալ սկզբունքներով.

1. Վարձու աշխատանքի բոլոր բնագավառներում տղամարդկանց համեմատությամբ կանանց ընձեռել օրական մեկ ժամով կարճ աշխատօր:

2. Հետծննդյան շրջանում աշխատող կանանց համար սահմանել երկու տարի տևողությամբ վճարովի արձակուրդ՝ անկախ երեխայի համար վճարվող նպաստի չափերից: Կանանց հատկացվելիք գումարի չափը սահմանել վերջին հինգ տարիների ընթացքում նրա ստացած աշխատավարձի միջինով՝ նկատի առնելով, որ յուրաքանչյուր տվյալ պահին աշխատավարձի ընդունված նվազագույն մակարդակից պակաս չլինի:

3. Հետծննդյան շրջանում՝ օրենքով սահմանված ֆիզիոլոգիական արձակուրդի ընթացքում, վարձու աշխատանքը շարունակելու ցանկություն ունեցող կանանց լրիվ աշխատավարձը պահպանելու հետ միասին շարունակել վճարել նաև վերը հիշատակվող նպաստը: Յուրաքանչյուր երեխայի ծննդից հետո վարձու աշխատանքը շարունակելու ցանկություն չունեցող կանանց աշխատանքային ստաժը ֆիզիոլոգիական արձակուրդից հետո չորս տարի ժամանակով համարել շարունակվող՝ առանց վճարի:

4. Մինչև չափահաս դառնալը ծնված ամեն մի երեխայի նպաստի նվազագույն չափը սահմանելիս ելնել ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամուտը պաշտոնապես ընդունված ապրուստի նվազագույն սահմանի վրա պահելու սկզբունքից:

5. Ընտանիքներում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ ծնված երեխայի նպաստը սահմանել 40-50%-ով աճող գործակիցներով ավելի բարձր նորմա, քան նախատեսված է նախորդ երկու երեխայի համար: Աղետի և սահմանամերձ գոտիներում առայժմ ընդունել 1,5-2,0 անգամ ավելի բարձրը նորմա՝ ծնվող երեխաների հաջորդականությանը համապատասխան աճող գործակիցներով (երրորդ և հաջորդ երեխաներ ունեցողները ծննդաբերող կանանց ընդհանուր թվի չափազանց քիչ տոկոսն են կազմելու):

6. Հանրապետությունում յուրաքանչյուր նորածնի հատկացվող միա-նվագ նպաստի չափերն ավելացնել և ընտանիքում ծնվող առաջին երեխայի համար սահմանել 5-6, հաջորդ երեխայի համար՝ 7-7,5 անգամով ավելի բարձր նվազա-

գույն վճարման նորմա, իսկ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ ծնվող երեխայի համար միանվագ նպաստը բարձրացնել 30-35 %-ով, աճող գործակիցներով:

7. Մինչև երեխայի չափահաս դառնալը հանրապետական միջին մակարդակի համեմատ երեք անգամ ավելացնել պատերազմի հետևանքով ծնողներից զրկված, միայն մեկ ծնող ունեցող և հաշմանդամ դարձած մարդկանց երեխաների նպաստի չափերը:

8. Ծովի մակերևույթից[7] 1500 մ ավելի բարձրություններում բնակվող կանանց, յուրաքանչյուր երեխայի համար, սահմանված նպաստի չափերն ավելացնել 45-50 %-ով (խոսքը վերաբերում է ինչպես ֆիզիոլոգիական արձակուրդի, այնպես էլ միանվագ նպաստի չափերին): Այն տարբերակել ըստ ծնվող երեխաների հաջորդականության, յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդի համար նպաստ ավելացնել աճող գործակիցներով և բնակավայրի գոտիականության՝ 1501 մ սկսած յուրաքանչյուր 200 մ բարձրության համար նպաստի չափերն ավելացնել 15-20%-ով:

9. Ծովի մակերևույթից 1700 մ ավելի բարձրություններում բնակվող երեք և ավելի երեխա ունեցող կանանց թոշակի իրավունք արտոնել 55-60 տարեկանում՝ տարբերակման հիմքում դնելով երեխաների թիվը, աղետի և սահմանամերձ գոտիներում բնակությունը:

10. Նախկինում վարձու աշխատանքներում ընդգրկված կանանց կենսաթոշակի նվազագույն չափը սահմանել երկու անգամ ավելի բարձր գործակիցներով, քան վարձու աշխատանքներում երբևիցե չընդգրկվածներինը:

11. Վարձու աշխատանք կատարողների կարգավիճակին հավասարեցնել երեք և ավելի երեխաներ ունեցող մայրերին, երեխաների թվին համապատասխան կենսաթոշակն ավելացնել աճող գործակիցներով: Վաղ կենսաթոշակի անցնելու և այլ կարգի արտոնությունները, որ հատկացվել է ՀՀ օրենքով չորս և ավելի երեխաներ ծնած և մեծացրած մայրերին, հավանաբար ճիշտ կլինի հատկացնել երեք և ավելի երեխաներ ունեցող կանանց, մանավանդ որ վերջիններիս թիվը կշարունակի նվազել:

12. Հատկապես աղետի և սահմանամերձ գոտիներում նոր կազմավորվող ընտանիքներին պետական հողային ֆոնդից հատկացնել հողաբաժին, ինչպես նաև տնամերձ հողամաս, բնակարանաշինության համար ավելի արտոնյալ պայմաններով տրամադրել համապատասխան վարկ և շինանյութ:

13. Աղետի և սահմանամերձ գոտիներում երեք և ավելի երեխաներ ունեցող մայրերին արտոնել միջմարզային տրանսպորտից ձրի օգտվելու իրավունք, զգալի դարձնել նախադպրոցական հիմնարկներում ընդունելության (հատկապես երկարօրյա) տարբերակված մոտեցումը[8]:

14. Սահմանամերձ գոտիներում անհատական բնակարանային շինարարություն իրականացնող ընտանիքներին տրամադրել վարկ՝ աղետի գոտու համար սահմանված պայմաններով: Վարկի մարման տևողությունը երկարացնել, իսկ

---

[7] **Խոջաբեկյան Վ., Խոջաբեկյան Ա.,** Սահմանամերձ գոտիներում ժողովրդագրական քաղաքականություն մշակելու և կիրառելու անհրաժեշտությունը (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 2264. ց. 1. գ. 21, 1-7 էջ):

[8] Նույն տեղում:

մարման տոկոսադրույքը պակասեցնել՝ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդի կապակցությամբ նվազող գործակիցներով:

15. Լեռնային շրջաններում գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվող ընտանիքներին հարկային քաղաքականությամբ արտոնել զեղչված չափերով ռենտավճար և եկամտահարկ վճարելու իրավունք: Նպատակային վարկ հատկացնելիս նվազեցնել մարման տոկոսադրույքը, երկարացնել ժամկետները՝ նկատի առնելով յուրաքանչյուր նոր երեխայի ծնունդը[9]:

16. Հեռանկարում հանրապետության բնակչության մահացության մակարդակը հիմնականում կապված կլինի նրա բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու հետ: Վերջինիս տակ պետք է հասկանալ ոչ միայն արտաքին և ներքին գլոբալ գործոնների բացասական ազդեցության կասեցումը, այլև զուտ սոցիալական բնույթի հետևյալ խնդիրների մասնակի լուծումը. ա) բնակչության բժշկական սպասարկման նոր, առաջադիմական, այդ թվում՝ մասնավոր, խառը, պետական ձևերի համալիր արմատավորման խթանումը: Այսպես, օրինակ, Հայաստանում սիրտանոթային համակարգի հիվանդությունների բուժումը վիրահատության միջոցով և այդ ուղղությամբ կադրերի պատրաստումը. բ) բժշկական գիտությանը հատկացվող միջոցների ավելացումը. գ) առողջապահության ցանցի տարածքային կառավարման կատարելագործումը. դ) կադրերի որակավորման բարձրացումը և այլն:

17. Մանկամահացությունը կրճատելու նպատակով խստորեն մտահոգվել հղի, ծննդաբերող կանանց և երեխաներին սպասարկող առողջապահական հաստատությունների ցանցի վերականգնման ու կարգավորման հարցերով: Մինչև 15 տարեկան երեխաներին կարիքի դեպքում ապահովել ձրի դեղամիջոցներով:

18. Հետծննդյան շրջանում երկու տարի վճարովի արձակուրդ և մինչև չորս-հինգ տարի աշխատանքային ստաժը պահպանելու պայմաններում նախադպրոցական հիմնարկներում, ներառյալ՝ մինչև չորս և հինգ տարեկան երեխաների ընդգրկվածությունը պակասեցնելու հաշվին, բարելավել սպասարկման մակարդակը մանկապարտեզներում, պետության հաշվին ավելացնել դրանց հատկացվող միջոցները: Դա թելադրվում է ավելի առողջ և ամրակազմ երեխաներ մեծացնելու անհրաժեշտությամբ:

19. Պետական բյուջեի լարվածության պայմաններում մայրության և մանկության պաշտպանությանը սատար կարող են կանգնել արհմիությունները, ինչպես նաև վարձու աշխատանքի բոլոր օղակները: Խնդիրը վերաբերում է արտադրական օղակներում շահույթներից, իսկ բյուջետային հիմնարկներում աշխատավարձի ֆոնդից տնտեսած գումարներից հատուկ ֆոնդերից միջոցների գոյացմանը և դրանց նպատակային իրացմանը:

[9] Նույն տեղում, էջ 1-5:

20. Հանրապետությունում կարելի է ստեղծել հատուկ «մայրության հիմնադրամ», խրախուսել ծնունդը, սատար կանգնել մայրերին, իմաստավորել մայրությունը: Ժողովրդագրական քաղաքականության իրականացմանը կարող են նպաստել նաև ձեռներեց մարդիկ, բաժնետիրական ընկերությունները, բանկերը, առևտրական օբյեկտները, ստեղծագործական միավորումները, եկեղեցին, հանրապետությունում գործող զանազան ընկերություններն ու կազմակերպությունները:

НЕОБХОДИМОСТЬ ПРЕОДОЛЕНИЯ ДЕМОГРАФИЧЕСКОГО КРИЗИСА И ПРЕТВОРЕНИЯ АКТИВНОЙ ДЕМОГРАФИЧЕСКОЙ ПОЛИТИКИ В ПЕРСПЕКТИВЕ

ХОДЖАБЕКЯН В. Е.
Академик НАН РА

Резюме

На основе оценки и выявления направлений и тенденций закономерностей демографического развития, а также роли факторов прироста населения представлена целостная демографическая картина Армении, в частности, напря-женная ситуация воспроизводства населения на современном этапе. Дан обстоятельный анализ новых проявлений этно-демографических процессов, позитив-ных и негативных тенденций эмиграции.

В течение предшествующих десятилетий Армения характеризовалась достаточно высокими показателями прироста населения, которые за последние 10-15 лет резко снизились. Если в 1990 г. рождаемость на 1000 чел. составляла 22,5 чел., смертность–6,2 чел., естественный прирост–16,3 чел., то соответствую-щие показатели 2002 г. составили: 10,1 чел., 8,0 чел. и 2,1 чел.

Подобные процессы обосновываются изменением поло-возрастной струк-туры населения, в частности, „старением" населения, социально-экономичес-кими причинами, необъявленной войной с Азербайджаном, эмиграцией моло-дежи, а также чрезвычайными ситуациями (стихийными бедствиями, землетря-сением и т. д.).

Исходя из ситуации, сложившейся в области демографии, целесообразно содействовать рождаемости населения, снижению смертности, в особенности детской, в течение ближайших 5-10 лет усовершенствовать претворяемую в республике демографическую политику, осуществляя ее на законодательной основе за счет централизованных средств и фондов, созданных с этой целью.